# ՔԻՐՏԵԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՅԻ ԹԻՒ 11 ՈՍԿԵՓՈՐԻԿԸ

( ԺԷ ԴԱՐԷՆ )

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուղթ՝ 498, ծաւալ՝ 12 × 8,3 × 4,: Գրութիւն՝ երկսիւն, գիր՝ միջակ եւ վարժ բոլորգիր: Տողք՝ 31: Նիւթ՝ եւրոպական հաստ թուղթ, ջրանիշեալ: Կազմ՝ կաշեպատ տախտակ, հնամաշ, ճնշազարդեալ, ներսէն հին տեղական տպածոյով պատած: Առջեւի պահպանակը եւ փակակապերը պոկուած, կորսուած: Գործածութենէ վերջը քանի մը թերթ կազմահան եղած, որոնք խնամքով իրենց տեղը կարեցի, քանի մը թերթ ալ հոս ու հոն կազմէն անջատուած: Թղթեայ պահպանակ՝ սկիզբը երկու թերթ եւ վերջը մէկ թերթ, երկաթագիր թղթեայ Աւետարանէ մը, Մատթէոսի մասերով, երկսիւն, 20 տողնոց, հաւանաբար ԺԱ. դար: Վերջի պահպանակը կազմէն ելած ըլլալով, այլեւս զայն ձեռագրէն հանեցի եւ պահպանակներու եւ հատակոտորներու հաւաքածոյիս մէջ դրի: Հանգամանքը՝ գործածութենէ թուղթերը քիչ մը աղտոտած, եւ վերջը քանի մը թերթ եզերքները մաշած կամ մնաուած, սակայն ամբողջութեամբ լաւ: Վերջին թուղթ կամ թուղթեր ինկած են եւ կորսուած, որով յիշատակարանը գըրչէն կը պակսի:

Մանրանկարչութիւն՝ էջ 4բ. բոլորէջեան մանրանկար մը. վեղարաւոր վարդապետ մը գալարաթուղթի մը վրայ գրելով զբաղած, իսկ իր առջեւ ծունկի են եկած երկու այր եւ երկու կին, դուցէ ստացողն ու իր ընտանիքը: Արուեստը ընտիր չէ: Գոյները վարդագոյն, կապոյտ, մութ դեղին, կանաչ. վճիտ չեն: Էջ 5ա. նոյն գոյներով սովորական խոշոր խորան մը: Թռչնագիր Ի մը եւ լուսանցազարդ: Ոսկի կարմիր եւ կապոյտ գոյներով 12 թռչուն լուսանցազարդ, 2 ծառ, 1 հրեշտակ, 11 մարդադէմ թռչուն եւ 84 ոճաւոր ծաղիկ եւ հիւսկէն, 74 թռչնագիր եւ 40 զարդագիր: ԺԶ–ԺԷ դարու սովորական ոճերով եւ վարժ վրձինով եղած են այս ծաղկումները: Ծաղկողը կը մնայ անծանօթ:

## ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Էջ 1ա. – 3ա. պարապ, որոնց վրայ սակայն զանազան նոր յիշատակարաններ գրուած են:

Էջ 3ա.ին փակցուած է երկթերթ նոտրգիր գրութիւն մը, վարէն մասամբ պատռած եւ կորսուած: Այս յաւելուածին առաջին էջը թրքախառն հայերէնով քարոզանման գրութիւն մըն է նոտրգիր. երկրորդ էջը խոշոր նոտրգիր նամակաձեւ մըն է առ «ամիրայ յա(ր)քայական ճարտարապետ», որուն տակը կան արաբաթիւ հաշիւներ: Երրորդ էջը պարապ, միայն մեր աթութայքը մասամբ, իբր գրչափորձ: Չորրորդ էջին բոլորգիր աղօթանման գրութիւն մը՝ մասամբ թուրքերէն հայատառ:

Էջ 3բ. գրչէն երկսիւն ցանկ նիւթոց, որուն ԼԸ. հատուածէն սկսեալ անհեթեթ նոտրգրով մը կը շարունակուի մինչեւ էջ 4ա.ի վերջը:

Էջ 4բ. բոլորէջեան նկար մը, որուն ստորին լուսանցքին վրայ գրչէն «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ տ(է)ր. եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ: Աւգնեա հոգիս ս(ուր)բ ա(ստուա)ծ ճըշմարիտ. եւ զսխալս ի մէնջ շնորհիւ քոյին ած ի յաւարտ»:

Հոս կու տամ հատուած առ հատուած խորագրեր, որոնք կարմրով գրուած են: Աւելցնեմ որ գրեթէ երկու թերթը անգամ մը, գրչէն, ստորին լուսանցքին տակ, սեւ մելանով բոլորգրուած է նիւթը: Օրինակ՝ «Երր(որ)դ աւուր ծննդեան» եւ այսպէս:



Էջ 5ա. Խորանին տակ « Խրատք Կանոնական: Ի Մովսէսէ Վարդապե(տէ) Երզնկեցւոյ Ասացեալ Գրեալ եւ առաքեալ: Եկեղեցեաց Հայաստ(անեա)ց»: Ասկէ վերջ պարունակութիւնը նոյնն է իմ 1551ի Ոսկեփորիկին հետ, մինչեւ անոր էջ 43ա. պարունակելով Յովհաննէս Երզնկացիի (Պլուզ) խրատները:

Էջ 38բ. « Սրբոյն Յակոբայ մծբնայ եպ(ի)ս(կոպոս)ին Ասացեալ ի յարութի(ւն) տ(եառ)ն մերոյ Եւ ի գինուորս որ պահէին զգերեզմանն»:

Էջ 49բ. «Յայտնութե(ան) պահոցն առաջին աւուրն Սարգսի վարդապետին ասացեալ»:

Էջ 52բ. դարձեալ նոյն խորագիրը:

Էջ 55բ. դարձեալ նոյնը եւ աւելցուած «վ(ա)ս(ն) բարկացողաց»:

Էջ 58բ. «Յայտնութե(ան) Պահոց Զ(ո)րր(որ)դ աւուրն վ(ա)ս(ն) ապ(ա)շխ(ա)րութե(ան) Ս(ա)րգսիս Վ(ա)րդ(ա)պ(ետ)ի ասացե(ա)լ»:

Էջ 63բ. «Երանելոյն Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ յաւետիս ամէն ա(ւր)հ(նեա)լ ս(ուր)բ ա(ստուա)ծածնին»:

Էջ 69ա. «Մեծի ա(ստուա)ծայայտնութե(ան) ճրագալուցին Յովակիմայ եւ աննայի ծնողաց ս(ուր)բ ա(ստուա)ծածնին Յակոբայ տ(եառ)ն եղբօրն»:

Էջ 78ա. « Պատմութի(ւն) սքանչելեաց ծննդեան եւ յայտնութե(ան) տ(եառ)ն մերոյ յ(իսուս)ի ք(րիստոս)ի»:

Էջ 79բ. «Երանելոյն եփրեմի խորին ասորոյ ասացեալ Ներբողեան ի ծնունդն յ(իսուս)ի ք(րիստոս)ի»:

Էջ 87ա. «Երանելոյն եփրեմի խորին ասորոյ ասացեալ յաւետիս կուսին մարիամու եւ ի ծնունդն ք(րիստոս)ի»:

Էջ 92բ. «Երանելոյն եփրեմի խորին ասորոյ ասացեալ ի ծնունդն ք(րիստոս)ի ա(ստուծո)յ մերոյ»:

Էջ 97բ. «Երանելոյն Յոհաննու ոսկեբերանի ասացեալ յաւետիս կուսին»:

Էջ 101բ. «Երանելոյն եպիփանու եպ(իս)կոպ(ո)սին ասացեալ ի զովեստ ս(ուր)բ ա(ստուա)ծածնին»:

Էջ 106ա. «Յաղագս ծննդեան տ(եառ)ն մ(ե)ր(ո)յ յ(իսուս)ի ք(րիստոս)ի Յակոբու եղբօր տ(եառ)ն ասացեա(ա)լ ի ծընունդ տ(եառ)ն»:

Էջ 108ա. «Սրբոյն Անթիպատրոսի Բոստրացոյ ասացեալ ի մկրտութի(ւ)ն ք(րիստոս)ի»:

Էջ 110բ. «Երանելոյն եփրեմի ասացեալ ի ծնունդ եւ ի մկրտութի(ւն) ք(րիստոս)ի ա(ստուծո)յ մերոյ բան զարման(ա)լի»:

Էջ 116բ. «Նորին սրբոյ Եփրեմի Ասացեալ ի մկրտութի(ւ)ն ք(րիստոս)ի եւ ընդդիմանալ մկրտչին»:

Էջ 122բ. «Վ(ա)ս(ն) մանկանցն բեթղահէմի Եւ փախստեանն Յեգիպտոս»:

Էջ 130ա. «Երանելոյն Յակոբայ մծբնայ եպ(իսկոպ)ոսի Գովեստ ի յովհաննէս մըկրտիչ եւ կարապետն ք(րիստոս)ի»:

Էջ 141ա. «Երանելոյն Եփրեմի Ասորոյ ասացեալ Ներբողեան: Ի ս(ուր)բն Յովհաննէս մկրտչին: Եւ ի կաքաւում աղջկան դստերն հերովդի»:

Էջ 148ա. «Երանելոյն Եփրեմի խորին ասորոյ ասացեալ ի գալուստ տ(եառ)ն ա(ստուա)ծորդւոյն Քառասնօրեա ի տ(ա)ճ(ա)րն Սողոմոնի»:

Էջ 154բ. «Ի վարդապետութէ(նէ) սրբոյն գրիգորի մեր լուսաւորչին»: Լուսանցքի տակ գրչէն սեւ մելան բոլորգիր «Կիրակին Կարդայ»:

Էջ 156բ. «Պատճառք վ(ա)ս(ն) առաջաւորացն Պահոց: Արարեալ Վանական վ(ա)ս(ն) այպան(ո)ղ(ա)ց զս(ուր)բ պ(ա)հս»:

Էջ 159բ. «Երեքշ(ա)բ(թ)ի Առաջաւորաց Պահոց: Յոհաննու Ոսկերբերանի ասացեալ»:

Էջ 164բ. «Առաջաւորաց Պահոց Չորեքշ(ա)բթօրն Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի ասացե(ա)լ Վ(ա)ս(ն) քարոզութե(ա)ն Յունանու Մարգարէին»:

Էջ 168ա. «Պատճառ առաջաւորաց պա-

© National Library of Armenia

հոյն: Հինգշ(ա)բ(թ)ի ասացեալ ս(ուր)բ եւ ուղղ(ա)փ(ա)ռ Վ(ա)րդ(ա)պ(ետա)ց»:

էջ 171բ. «Երանելոյն Եփրեմի Խորին ասորոյ ասացեալ ի Նինուէացիսն. եւ ի նորին յորդորումն ապաշխարութե(ան)»:

էջ 181բ. «Սրբոյն Եղիշէի Հայոց վարդապետի Ասացեալ վ(ա)ս(ն) յարութե(ա)ն ք(րիստոս)ի»:

էջ 184բ. «Սրբոյն Յոհաննու մանդակունեցւոյ Ասացեալ վ(ա)ս(ն) մխիթարութե(ան) Սգաւորաց»:

էջ 189ա. «Երանելոյն Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ վ(ա)ս(ն) ննջեցելոց եւ մխիթարութե(ան) սգաւորաց»:

էջ 192բ. «Պատմութի(ւն) Վարուց Ս(ուր)բ հայր(ա)պ(ետ)ին Իսահակայ Պարթեւի Որդոյն Ներսէսի»: Որուն կցուած է էջ 195ա. «Տեսիլ մարգարէութե(ան)» նմն. եւ էջ 197ա. «Մեկնութի(ւն) տեսլեան»:

էջ 202ա. «Երանելոյն եպիփանու կիպրացոյ Աղէքսանդրացոյ Ասացեալ յաւուր մեծի յարութե(ան) տ(եառ)ն մերոյ յի(սուսի) ք(րիստոս)ի. եւ առ յովանէս»:

էջ 212ա. «Յոհաննու ոսկիբերանի Ասացեալ յայրին եւ ի մեռեալ որդին»:

էջ 215բ. «Երանելոյն Յոհաննու Ոսկիբերանին ասացեալ ի մխիթարութի(ւն) սգաւորաց»:

էջ 218ա. «Վկայաբանութի(ւն) Հ(ա)ւ(ա)տ(ո)յ ա(ստուա)ծաբանին Գրիգորի»:

էջ 220ա. «Բուն բարեկենդանի շաբ(ա)թըն Պօղոսի տարօնեցւոյ իմաստասիրի եւ քաջ բաբունոյ աս(ա)ց(եա)լ ընդդէմ ժողովոյն քաղկեդոնի եւ այլ չարափառացն հերձուածողացն»:

էջ 227բ. «Բուն բարեկենդանի կ(ի)ր(ա)կին Սրբոյն բարսղի կեսարացւոյն աս(ա)ց(եա)լ վ(ա)ս(ն) Պահոց»:

էջ 230բ. «Երանելոյն Եփրեմի Խորին ասորոյ ասացե(ա)լ վ(ա)ս(ն) պահոց եւ ողորմու(թ)ե(ան) աղք(ա)տ(ա)ց»:

էջ 234բ. «Երանելոյն Եփրեմի խորին ասորոյ աս(ա)ց(եա)լ վ(ա)ս(ն) ող(ո)րմ(ո)ւ(թ)ե(ան)»:

էջ 238բ. «Պատճառ Պ(ա)հ(ո)ցն աղուհացից ո(ր)պի(սի) խ(ո)րհ(ուր)դ ունի Ընթ(եր)ց(ուա)ծն ի գրոցն յեւրից: Ասացեալ սրբոց Վ(ա)րդ(ա)պ(ետա)ցն դշխ (չորեքշաբթիս) Աղուհացիս Պահոց»:

էջ 239բ. «Երանելոյն Եփրեմի Խորին ասորոյ աս(ա)ց(եա)լ Առաջին դշին (չորեքշաբթին) Վ(ա)ս(ն) Պահոց սրբութե(ան)»:

էջ 242բ. «Պատճառ Հինգշ(ա)բ(թ)ի Վ(ա)ս(ն) Պահոց քառասնորդաց Ասացե(ա)լ ի սրբոց վ(ա)րդ(ա)պ(ետա)ց»: Որուն կցուած է էջ 244ա. «Յաղագս երախայիցն»:

էջ 247բ. «Պատճառ Ընթ(ե)րց(ուա)ծոցն Առաջին Ուրբաթին Քառասնորդաց Պահոց»:

էջ 248բ. «Յոհաննու ոսկիբերանի ասացեալ վ(ա)ս(ն) Պահոց եւ վարուց առաքինութե(ան) Աւրինակաւ ի սրբոցն»:

էջ 252բ. «Երանելոյն Եփրեմի: Խորին ասորոյ ասացեալ. Վ(ա)ս(ն) չլուծանելոյ Զպահս: Դշբի (չորեքշաբթի) եւ ուրբաթի: Դու առաջին Շ(ա)բ(ա)թըն կարգայ»:

էջ 256ա. «Երկր(որ)դ կիրակին Յոհաննու Ոսկիբերանի ասացե(ա)լ. Ի կոչումն Պետրոսի յառ(ա)ք(ե)լու(թ)ի(ւն) բանին ա(ստուծո)յ»:

էջ 260ա. «Պատճառ թէ ո(ր)պ(էս) երկրորդ շ(ա)բթու հինգաւուրն հաւասար ունի ընթերցուածն եւ պս(ա)ղմ(ո)սն զատ յայլոցն. առ եօթն(երոր)դ շաբաթն հայելով»:

էջ 262ա. «Երկր(որ)դ երկուշաբաթին: Երանելոյն Յոհաննու Ոսկիբերանի ասացե(ա)լ վ(ա)ս(ն) խոստովանու(թ)ե(ան) մեղաց եւ ապաշխարանաց»:

էջ 266ա. «Երկու դշին (երեքշաբթին) Յոհաննու ոսկիբերանին ասացեալ վ(ա)սը(ն) Խոստովանութե(ան) եւ ապաշխարութե(ան)»:

էջ 270բ. «Երկ(րոր)դ Չորեքշաբթին Ընթերցուածոցն համառօտ Մեկնութի(ւ)ն Բազում բանից»:

էջ 271բ. «Չորեքշաբթի. Երանելոյն Յոհաննու Մանդակունեցւոյ Ասացեալ վ(ա)սը(ն) ընդունելի եւ անընդունելի ողորմութե(ան)»:



էջ 276ա. «Մեկնութի((ւն) ընթերց(ո)ւ(ա)ծ(ո)ց. Հինգշ(ա)բ(ա)թ աւուրն կարգայ»:

էջ 277ա. «Երկ(րոր)դ Հինգշաբթին Յոհաննու մանդակունեցւոյ. վ(ա)ս(ն) երդմանց սովորութե(ան)ց որ ի չարէն է»:

էջ 281ա. «Մեկնութի(ւն) Ընթերց(ուա)ծոց Ուրբաթ աւուր»:

էջ 282բ. «Երկու ուրբաթ Յոհաննու Մանդակունեցւոյ ասացե(ա)լ վ(ա)ս(ն) Թատերաց եւ գուսանաց»:

էջ 287բ. «Խրատ հոգեշահ եւ օգտակար Ասացեալ հոգելի. եւ բանիբուն վ(ա)րդ(ա)պ(ետ)ին Յոհաննու երզնկեցւոյ Մականուն Պլուզ կոչեցելոյ: Երկ(րոր)դ Շաբաթ օրն»:

էջ 289բ. «Երկր(որ)դ Կիրակին Երանելոյն Յոհաննու Ոսկիբերանին աս(ա)ց(եա)լ վ(ա)ս(ն) անառակին»:

էջ 294բ. «Դարձեալ նոյն կիրակէին Երանելոյն Յոհաննու Ոսկիբերանին ասացեալ Յանառակ որդին եւ զանպիտան գըրիչս յիշեա»:

էջ 299ա. «Երր(որ)դ երկուշ(ա)բթին. Երանելոյն Բարսղի Կեսարու եպիսկոպոսի ասացեալ վ(ա)ս(ն) Պահոց»:

էջ 301ա. «Երանելոյն Յոհաննու Մանդակունեցւոյ ասացեալ Յաղագս Տեսչութե(ան) Քահ(ա)ն(ա)յից ի վ(ե)ր(ա) ժողովրդեանն ա(ստուծո)յ Ո(ր)պ(էս) հովիւ Զհօտս աչխար(ա)ց»:

էջ 307բ. «Երրորդ Շաբաթու Չորեքշաբաթին Մեկնութի(ւն) Ընթերցուածոցն Ելիցն: Եւ յովելի Մարգարէին»:

էջ 309ա. «Երանելոյն Յոհաննու մանդակունեցւոյ Ասացեալ վ(ա)ս(ն) չբանբասելոյ զք(ա)հ(անա)յս եւ զվ(ա)րդ(ա)պ(ետ)ս»:

էջ 313բ. «Երանելոյն Յոհաննու Մանդակունեցւոյ ասացեալ: Վ(ա)ս(ն) ողորմութե(ան) եւ աղքատ սիրու(թ)ե(ան)»:

էջ 319ա. «Պատճառ ընթ(ե)րց(ուա)ծոց Երր(որ)դ Շաբաթի ուրբաթին»:

էջ 320բ. «Երանելոյն Յոհաննու Մանդակունեցու ասացեալ Վ(ա)ս(ն) մխիթարութե(ան) աղքատաց»:

էջ 324բ. «Ողբ պիտանի Գր(ի)գ(ո)ր Վ(ա)րդ(ա)պ(ետ)ի Ասացեալ վ(ա)ս(ն) մեռելոց Եր(րոր)դ Շաբ(ա)թըն Կ(ար)գ(ա)յ»:

էջ 331բ. «Չորրորդ Կիրակին: Երանելոյն Յոհաննու Ոսկիբերանին Ասացե(ա)լ ի մեծատունն»:

էջ 335բ. «Երանելոյն Կիւրղի ե(րուսաղէ)մայ Հայր(ա)պ(ետ)ին Արարեալ կոչումն Ընծայութե(ան) Ամենակալն: Եւ ընթ(ե)րց(ուա)ծն Յերեմիայի: Ա(ստուա)ծ մեծ խորհրդովք Եւ հզօր գործովք: Ամենակալ մեծանուն աչք քո բացեն»:

էջ 339բ. «Չ(որրո)րդ դշին (երեքշաբթին): Նորին Կիւրղի ի կոչումն ընծայութե(ան) եւ յարարիչն երկնի եւ երկրի. եւ ի բանն յոբայ: Ո՞վ է դայ որ թագուցանէ յինէն զխ(ո)րհ(ուր)դս սրսի (կարդայ «սրտի») իւրոյ»:

էջ 346ա. «Մեկնութի(ւն) ընթ(ե)րցուածոց Չ(որրո)րդ Չորեքշաբաթին»:

էջ 347ա. «Սրբոյն Թէոփիլոսի շնորհալից Վ(ա)րդ(ա)պ(ետ)ի Ասացեալ Յաղագս միջնոց քառասնորդաց պ(ա)հ(ո)ց»:

էջ 351բ. «Չորր(որ)դ հինգշաբ(ա)թին միջնոց աղուհացից: Երանելոյն Թէոփիլոսի ասացե(ա)լ Վ(ա)ս(ն) քառասնորդաց Պահոցն»:

էջ 356ա. «Մեկնութի(ւն) ընթ(ե)րց(ո)ւ(ա)ծոց: Չ(ո)րր(որ)դ շաբաթի ուրբաթուն»:

էջ 361ա. «Երանելոյն Եղիշէի Հայոց Վ(ա)րդ(ա)պ(ետ)ի Ասացե(ա)լ ի բանն Եսայեա մ(ար)գ(ա)րէին որ ասէ»:

էջ 363բ. «Թէոփիլոսի Ասացեալ ի ս(ուր)բ Խ (40) մանկունս: Եւ ի խ(ո)րհ(ուր)դ քառասնորդաց Պահոցս»:

էջ 370ա. «Հինգեր(որ)դ Կիրակին Յոհաննու Ոսկիբերանին ասացեալ ի փարիսեցին եւ ի մաքսաւորն»:

էջ 372ա. «Սրբոյն Յոհաննու Ոսկիբե–

© National Library of Armenia

րանին Աստացեալ ի դատաւորն եւ յայրին»։

Էջ 375բ․ «Դարձեալ նոյն Կիրակէին քառասնորդաց պահոցն սրբոյն Յոհաննու Ոսկիբերանի ասացեալ ի բանն տ(է)րունական որ ասէ ի ս(ուր)բ աւետարանն»։

Էջ 379ա․ «Հինգերորդ Երկուշ(ա)բթին Երանելոյն Եփրեմի ասորոյ ասացեալ Վ(ա)ս(ն) զղջման եւ Խոստովանութե(ան)»։ Որուն կցուած է էջ 383բ․ «Վ(ա)ս(ն) բարի խրատու մարդկան»։

Էջ 386ա․ «Հինգ(ե)ր(որ)դ Երեքշ(ա)բթին։ Յոհաննու մանդակունեցոյ․ վ(ա)ս(ն) չառնելոյ ոխ եւ բարեկամութի(ւն) ընդ ամենին ա(ստուծո)յ»։

Էջ 389բ․ «Մեկնութի(ւն) Ընթերց(ո)ւ(ա)ծոց Հինգերորդ շ(ա)բթու Չորեքշաբթուն կարդայ։ եւ գլխ զանարժանս յիշեա»։

Էջ 391ա․ «Հինգ(երոր)դ Չ(ո)ր(ե)քշ(ա)բթին Յոհաննու մանդակունեցւոյ ասացեալ Վ(ա)ս(ն) ոխակալաց եւ քինահանաց»։

Էջ 395ա․ «Հինգ(երոր)դ հինգշ(ա)բթին Յոհաննու Մանդակունեցւոյ Ասացեալ Վասն Բարկացողաց»։

Էջ 398բ․ «Մեկնութի(ւն) ընթերցու(ա)ծ(ո)ցն հինգերորդ Շաբաթու Ուրբաթին յերկրորդ օրինացն»։

Էջ 400ա․ «Հինգերորդ ուրբաթին Յոհաննու մանդակունեցոյ Վ(ա)ս(ն) սիրոյ եւ մախանաց»։

Էջ 402բ․ «Պատմութի(ւն) վ(ա)ս(ն) Անքուն որդանցն եւ վ(ա)ս(ն) խոստութե(ա)նց Ասացեալ․ Վարդան Վ(ա)րդ(ա)պ(ետ)ի»։

Էջ 406բ․ «Վեցերորդ Կիրակէին Յոհաննու Ոսկիբերանի ասացեալ յաւ(ետարա)նի Մեկնութէն(էն)»։ Կը յաջորդէ նոյնին «ի ղ(ու)կ(ա)ս(ու) աւ(ե)տ(ա)ր(ա)նին մեկնութեն(էն) Ասացեալ»։

Էջ 414ա․ «Երանելոյն Յոհաննու Մանդակունեցւոյ ասացեալ Վ(ա)ս(ն) ապ(ա)շխ(ա)րութե(ան) եւ Պահ(ո)ց»։

Էջ 418բ․ «Վեց(երո)րդ շաբաթու բշին (երկուշաբթին) Վ(ա)ս(ն) գալստեան Նեռին եւ կատարածի աշխարհի»։

Էջ 421բ․ «Երանելոյն Յոհաննու Մանդակունեցւոյ ասացեալ Վ(ա)ս(ն) Պահոց Պնդութե(ան)»։

Էջ 425ա․ «Մեկնութի(ւն) ընթ(ե)րցուածոց։ Վեցերորդ շաբաթու Չորեքշաբթին»։

Էջ 426բ․ միայն գլխատառերը կարմրաւ, մնացեալը սեւ մելանով։ «Երանելոյն Յոհաննու Ոսկիբերանի ասացեալ Վ(ա)ս(ն) աղքատսիրու(թ)ե(ան) Եւ ողորմութե(ան) տնանկաց․ եւ կարօտելոցն»։

Էջ 429բ․ նոյնպէս։ «Վեցեր(որ)դ շաբաթու Հինգշաբաթի Երանելոյն Յոհաննու Ոսկիբերանին ասացեալ․ Ի մեկնութի(ւն) առակաւ(ո)ր բանի Աւետարանին որ ասէ»։

Էջ 433բ․ նոյնպէս։ «Վեցեր(ո)րդ Շաբաթու Ուրբաթի Մեկնութի(ւն)։ Ընթերցուածոցն»։

Էջ 436բ․ նոյնպէս։ «Երանելոյն Յոհաննու Մանդակունեցւոյ ասացեալ։ Վ(ա)ս(ն) զգուշութ(եամ)բ եւ երկիւղիւ։ Մերձենալ ի մարմին եւ արիւն որդւոյն ա(ստուծո)յ»։

Էջ 441ա․ նոյնպէս։ «Վեց Շաբաթօրն։ Երանելոյն Յակոբայ Սրճոյ Եպ(իսկոպո)սի աս(ա)ց(եա)լ Ներբ(ո)ղե(ա)ն Ի յ(ա)ր(ո)ւ(թ)ի(ւ)ն Ղազ(ա)ր(ո)ւ»։

Էջ 446բ․ նոյնպէս։ «Մեծի աւուր։ Ծաղկազարդին Յաւետարանի մեկնութէն(էն) Ասացեալ ս(ուր)բ Վ(ա)րդ(ա)պ(ետ)աց Ի բանն որ ասէ»։

Էջ 450ա․ նոյնպէս։ «Մեծի բշին (երկուշաբթին)։ Յոհաննու Ոսկիբերանի ասացեալ Վ(ա)ս(ն) աքսորմանն ադամայ ի դրախտէն»։

Էջ 453բ․ նոյնպէս։ «Մեծի Երեքշաբթին։ Յոհաննու Ոսկիբերանին Ասացեալ ի Ժ (10) կուսանսն»։

Էջ 457բ․ նոյնպէս։ «Մեծի Չորեքշաբաթի։ Երանելոյն Թէոփիլոսի Վարդապետի։ Ասացեալ Յաւետարանի Պատմութ(են)է․ Ի կինն պոռնիկ որ արդարացաւ»։

Էջ 462ա․ նոյնպէս։ «Մեծի եւ Հրաշափառ Հինգշաբաթին տ(եառ)ն Զաքարիայ հայոց կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սի ասացեալ յաւ(ետարա)նի Մեկնութ(են)էն»։ Այս Զաքարիա Կաթողիկոսը Ա․ն է, Ձագեցի կոչուած որ կաթողիկոսեց 855–876։

Էջ 464բ․ նոյնպէս։ « Աւագ ուրբաթի։ Տեառն Զաքարիայի։ Կաթուղիկոսի։ Ասաց(եա)լ Ի թաղումն ք(րիստոս)ի Եւ ի տ(ա)գն(ա)պն ս(ա)տ(ա)ն(ա)յի»։

Էջ 470բ․ նոյնպէս։ «Մեծի Շաբաթուն Երանելոյն Թէոփիլոսի Աշակերտի Յոհաննու Ոսկիբերանի Ասացե(ա)լ ի գ(ե)ր(ե)զմանն ա(ստուա)ծընկալ»։

Էջ 475ա․ նոյնպէս։ «Մեծի զատկի Կիրակէին։ Սրբոյն Յակոբայ․ Սրճոյ եպ(իսկոպո)սին։ Ասացեալ ներբողեան ի ս(ուր)բ Յարութի(ւ)ն»։

Էջ 479բ․ նոյնպէս։ «Երկ(րո)րդ աւուր Յարութե(ան) նորին Թէոփիլոսի Աշակ(ե)րտի Յոհաննու Ոսկիբերանի ասացեալ վ(ա)ս(ն) թաղման եւ յարութե(ա)ն ք(րիստոս)ի ա(ստուծո)յ մերոյ »։ Էջ 483բ․ դարձեալ նոյն խորագրով գրութիւն մը։

Էջ 488բ․ նոյնպէս։ «Պատմութի(ւն) Վ(ա)ս(ն) թաղման եւ յարութե(ա)ն ք(րիստոս)ի ա(ստուծո)յ մերոյ»։

Էջ 492ա․ Բ․ կարմրաւ։ «Հինգեր(ո)րդ աւուր Յ(ա)ր(ո)ւթե(ան) Թուղթ Պիղատոսի Դ(ա)տ(ա)ւ(ո)րի առ Տիբերոս կայսրն։ Զոր գրեաց յետ խաչելութե(ա)ն ք(րիստո)սի ա(ստուծո)յ մերոյ »։ Կը սկսի․ «Ինքնակալդ սերաստիայ․․․»։ Կ՚աւարտի էջ 494ա․ Բ․ «․․․ ս(ուր)բ երրորդութի(ւն)․ այժմ եւ միշտ»։

Էջ 494ա․ Բ․։ « Պատմութի(ւն) վ(ա)ս(ն) սքանչելեաց պատկերին ք(րիստոս)ի Զոր ի տախտակին»։ Կը սկսի․ «Ի սահմանս Տիւրոսի եւ Սիդովնի․․․»։ Կ՚աւարտի էջ 495ա․ Ա․ «․․․ Յորմէ բ(ա)զ(ու)մ նշանք լինին»։



Էջ 495ա․ Ա․։ «Պատմութի(ւն) վ(ա)ս(ն) գալստեան իւղաբեր կուսանաց ի գ(ե)ր(ե)զմանն ք(րիստոս)ի․ եւ աշակ(ե)րտ(ա)ցն Պ(ե)տր(ո)սի եւ Յ(ո)հ(ա)ն(ո)ւ »։ Կը սկսի։ « Եւ ի միաշաբաթոջն․․․»։ Կ՚աւարտի էջ 498բ․ Բ․ 3․․․ զուգէ միահեծան իշ »․․․ (Մնացեալը կը պակսի ինկած թուղթի պատճառաւ)։

Կը պակսի նաեւ գլխաւոր յիշատակարանը։ Սակայն էջ 9բ․ հատուածին վերջը գրչէն կայ։ «Ողորմած ա(ստուա)ծ ողորմեա ստացողի գրոցս Ա(ստուա)ծատուր վարդապետին եւ ծնողացն Շահրազին եւ Զամանին․ եւ Մարգարտին․ եւ Գր(ի)գ(ո)ր գրչիս»։ Աստուածատուր վարդապետին անունը աւելցուած է պարապ թողուած միջոցի մէջ։ Նման ուրիշ բազմաթիւ յիշատակութիւններ կան գրչէն, ուր Աստուածատուր վարդապետի անունը գրուած է բուն իսկ գրչէն։ Աստուածատուր վարդապետին ինքնութիւնը առ այժմ ինծի կը մնայ անծանօթ։

Ձեռագրիս գրիչը Գրգոր որ ինքզինքը թէ՛ գրիչ եւ թէ գծող (գրող) կը կոչէ անպիտան, եղկելի եւ մեղապարտ մակդիրներով, իր մասին ուրիշ մանրամասնութիւն չի տար, այլուստ անծանօթ կը մընայ։ Ծանօթ չէ նաեւ գրչութեան տեղ եւ թուականը։ Սակայն դատելով եւրոպական ջրանիշ թուղթէն եւ գրչութենէն, անտարակոյս ԺԷ դարէն է կամ առ առաւելն ԺԶ դարու վերջէն։ Ստացող՝ Աստուածատուր վարդապետ որդի Շահրազի եւ Զամանի եւ թոռ Մարգարտի։

Ձեռագիրը գնուած է Կ․ Պոլիս, գրավաճառ Պետրոս Նշանեանէ, 1951ի Մայիսին, 65 տոլարի։

Յ․ ՔԻՒՐՏԵԱՆ